



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

« _____ » 2014թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐԶ ԲԱՆԱԿԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Սիրելի զինվորներ.

Հարգելի սպաներ, ենթասպաներ, կրտսեր հրամանատարներ.

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Հայոց ազգային բանակի 22-րդ տարեդարձի կապակցությամբ: Հայաստանի անկախացման օրից ի վեր, մեր երկրի ամենակարևոր ձեռքբերումներից մեկն ազգային բանակի կայացումն է, որի ակունքներում կանգնած են Արցախյան ազատագրական պայքարի տարիներին ձևավորված կամավորական ջոկատները, որոնք հետագայում դարձան Հայոց բանակի հիմնասյունը: Մեր բանակի կազմավորման ակունքներում մեծ ու անուրանալի է Շիրակի զավակների ներդրումը, որոնցից շատերը այդպես էլ չտեսան իրենց ստեղծած բանակի փառավոր ներկան, քանզի նահատակվեցին հայրենիքի ու Արցախի պաշտպանության մարտերում: Ցավոք, այսօր էլ մեր հերոս հայորդիները նահատակվում են թշնամու դավադիր գործողություններից:

Հավերժ փառք նրանց հիշատակին:

Հայկական զինված ուժերը մեր երկրի սահմանների հուսալի պաշտպանն է, մեր ժողովրդի խաղաղ ու անվտանգ կենսագործունեության ապահովողը, ինչպես նաև մեր երկրի առաջընթացի կարևոր պայմանը և մենք պարտական ենք դիրքերում և խրամատներում յուրաքանչյուր օր մեր անդորրը պաշտպանող հայ զինվորին:

Հարգելի հայրենակիցներ այս տոնական օրը մաղթում եմ Ձեզ քաջատողջություն, խաղաղություն ու նորանոր ձեռքբերումներ, իսկ մեր զինվորներին՝ քաջատողջություն, անկոտրուն կամք, բարձր մարտունակություն և բարի ծառայություն:

Հարգանքով՝

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ